ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՆՎԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ լեզվաբանության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված երևույթներից են հավելական կապակցությունները՝ հակառակ այն բանի, որ դրանք հայերենում հանդես են եկել դեռևս հին ժամանակներից և լայնորեն գործածվել են մանավանդ խոսակցական լեզվում։

Հավելական կապակցությունների առաջին ուսումնասիրողը երախտավոր հայագետ Մանուկ Աբեղյանն է[1]։ Այդ հարցով զբաղվել են նաև Ս. Աբրահամյանը, Վ. Առաքելյանը, Ն. Պառնասյանը և Գ. Գարեգինյանը[2]։

Հավելական կապակցությունների վերաբերյալ մեր լեզվաբանական դրականության մեջ եղած տեսակետներից կարելի է բխեցնել հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Հայ լեզվաբանության մեջ հավելական կապակցությունները դիտվում են որպես նախադասությունների կամ խոսքի միավորների կապակցման ձև, տեսակ, և որպես այդպիսին, հիմնականում արտահայտում են համադասական հարաբերություն, բայց կարող են ցույց տալ և ստորադասություն։

2. Հավելական միավորների կապակցման միջոցներն են շաղկապներն ու շաղկապական բառերը և շարահարությունը։

3. Հավելական շաղկապներն ու կապակցությունները հանդես են բերում կիրառական, իմաստային և ոճական տարբեր առանձնահատկություններ։

Հիմք ընդունելով եղած տեսակետները և հավելական կապակցությունները համարելով շարահյուսական կապի այնպիսի տեսակ, որը կարող է արտահայտել թե՛ համադասական, թե՛ ստորադասական հարաբերություն, անհրաժեշտ է բացահայտել նաև հավելական կապակցություններին հատուկ մի շարք այլ առանձնահատկություններ։ Այս առումով էլ նպատակահարմար ենք գտնում ամենից առաջ նշել ինչպես համադասություն դրսևորող մյուս տեսակներից, այնպես էլ ստորադասությունից ունեցած դրանց տարբերություններն ու բնութագրական հատկանիշները։

Սկսենք համադասությունից։ Բնական է, որ քննության առարկան ամենից առաջ պետք է լինի բարդ համադասական նախադասությունը։ Իսկ վերջինիս բաղադրիչները, ինչպես հայտնի է, միմյանց հետ միանում են տարբեր

---

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 654։

2 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1965, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964; Ն. Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում («Լեզվի և ոճի հարցեր», 2, Երևան, 1964), Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։

հարաբերությամբ՝ միավորական, ներհակական, սառնական. հավելական: Ի՞նչ տեղ է գրավում հավելական կապակցությունը համադասություն արտահայտող այս տեսակների շարքում և ի՞նչ յուրահատկություններ ունի։

Համադասություն ցույց տվող մյուս տեսակների դեպքում, անկախ այն բանից, թե նախադասության բաղադրիչները միավորում են համասեռ երևույթներ, արտահայտում են հակադրություն, թե այդ երևույթներից միայն մեկն է իրական, հնարավոր դիտվում, այդ բաղադրիչներն իրար նկատմամբ գտնվում են միանգամայն համազոր հարաբերության մեջ և միմյանցից կախում չունեն։

Մինչդեռ փոքր-ինչ այլ է բաղադրիչների հարաբերությունը հավելական կապակցության ժամանակ. «Բնությունը մարդուն կյանք է պարգևում, և դա մարդու մեծագույն երջանկությունն է» (Շխ, էջ 7)։ Այս դեպքում արդեն բաղադրիչների համազոր հարաբերությունը կարծես խախտվում է, նրանցից մեկը դառնում է հիմնական արտահայտություն (Բնությունը մարդուն կյանք է պարգևում), իսկ մյուսը առաջինի նկատմամբ համարվում է լրացուցիչ բացատրություն, իմաստային, վերաբերմունքային հավելում (և դա մարդու մեծագույն երջանկությունն է)։

Իհարկե, հավելական կապակցությունը կարող է արտահայտել նաև համադասություն ցույց տվող մյուս տեսակներին հատուկ հարաբերություններ։ Օրինակ՝ «Չկա որսկան Մանվելը։ Եվ Թումասը չկա։ Եվ նրա աղջիկը» (Սխ, էջ 50)։ «Պետք է գործել հանգիստ, առանց երկչոտության, բայց և առանց ավելորդ համարձակության» (ԲՌ, էջ 152)։

Բերված օրինակներում նախադասությունները կամ նրանց բաղադրիչները միմյանց են միացել որպես հավելական կապակցություններ, սակայն դրանցում կան նաև միավորության ու ներհակության որոշ տարրեր, և այդ տարբեր հարաբերությունների ներթափանցումներում երբեմն դժվար է լինում որոշել, թե որն է գլխավորը։ Նման փաստերը վկայում են հավելական կապակցությունների՝ բազմազան նշանակություններ դրսևորելու հատկության մասին։

Արդեն նշվել է, որ հավելական կապակցությունը կարող է ցույց տալ նաև ստորադասական հարաբերություն։ Ուստի քննենք նաև, թե այս դեպքում ինչ առանձնահատկություններ է դրսևորում այն։ Դրա համար անհրաժեշտ է հավելական տիպի երկրորդական նախադասությունը համեմատել մյուսների հետ։

Սովորական ստորադասության ժամանակ բաղադրիչների միջև ստորադասական հարաբերությունն արտահայտված է անմիջականորեն, այսինքն երկու փաստերից կամ երևույթներից մեկը (երկրորդական նախադասությունը) իր արտահայտած իմաստով անմիջականորեն ստորադասված է մյուսին, լրացնում է նրա միտքը (գլխավոր նախադասության) և քերականական կախման մեջ է նրանից։ Օրինակ՝ Ժողովն սկսվեց ժամը վեցին, երբ բոլորը հավաքվեցին։ Չէր ուզում գնալ, որովհետև ուշ էր։

Այլ է բաղադրիչների հարաբերությունը, երբ երկրորդական նախադասությունն արտահայտված է հավելական կապակցությամբ։ Այս դեպքում էլ, իհարկե, բաղադրիչների միջև պահպանվում է քերականական լրացման-լրացյալի հարաբերությունը, սակայն երկրորդական նախադասությունն իր արտահայտած բովանդակությամբ ոչ թե անմիջականորեն է ստորադասվում

գլխավորին, այլ դառնում է հավելված ստորադասություն, լրացուցիչ մեկնություն։ Օրինակ՝ Ժողովն սկսվեց ժամը վեցին, երբ որ պետք է սկսվեր։ Ջէր ուզում գնալ, որովհետև ուշ էր, մանավանդ որ ճիվանդ էլ էր։

Շատ կարևոր դեր է կատարում և երկրորդական նախադասության լիովին առանձնացումը, որը բանավոր խոսքում դրսևորվում է հնչերանգով, իսկ գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրական նշանով (հիմնականում վերջակետով)։ Այսպես՝ Վազեցինք հարևան սենյակը, որովհետև այնտեղ տաք էր։ Վազեցինք հարևան սենյակը։ Որովհետև այնտեղ տաք էր։

Երկու դեպքում էլ արտահայտված է ստորադասական հարաբերություն։ Սակայն առաջին օրինակում բաղադրիչները հանդես են գալիս մեկ բարդ նախադասության ներսում, և երկրորդական նախադասությունն ինքնուրույն չէ, քերականական և իմաստային կախման մեջ է գլխավորից։ Իսկ երկրորդ օրինակում այն դուրս է բերված բարդ միավորի սահմաններից, առանձնացված է, որի շնորհիվ դարձել է հավելական կապակցություն, ձեռք բերել առավել ինքնուրույնություն, և քերականական կախվածությունը գլխավորից ավելի թույլ է։

Հավելական կապակցությամբ արտահայտված երկրորդական նախադասությունը մյուսներից տարբերվում է և իր շարադասությամբ։ Այն բացառապես դրվում է բարդ նախադասության վերջում, մինչդեռ մյուսները կարող են դրվել և՛ գլխավոր նախադասությունից առաջ, և՛ նրանից հետո, և՛ նրա ներսում։ Բացի այդ, բոլոր երկրորդական նախադասությունները չէ, որ կարող են արտահայտվել հավելական կապակցությամբ։

Ի՞նչ բնորոշ գծեր են հատուկ հավելական կապակցություններին։

Ինչպես տեսանք, ընդհանրապես համադասության ժամանակ արտահայտության բաղադրիչ մասերը շարահյուսորեն-քերականորեն համազոր միավորներ են, իսկ ստորադասության ժամանակ այդ մասերի միջև կա քերականական լրացման ու լրացյալի հարաբերություն։ Եվ եթե հավելական կապակցությամբ արտահայտված համադասության ժամանակ կարծես խախտվում է բաղադրիչ մասերի այդ համազորությունը (նրանցից մեկը դառնում է առաջնային, հիմնական, իսկ մյուսը՝ իմաստային, վերաբերմունքային հավելում), ապա հավելական կապակցությամբ դրսևորված ստորադասության ժամանակ տեղի է ունենում հակառակը՝ կարծես խախտվում է քերականական լրացման-լրացյալի սերտ հարաբերությունը (թույլ է լինում քերականական կապը նրանց միջև, և հավելվող մասը համեմատաբար ինքնուրույն է դառնում)։

Բացի այդ, թե՛ համադասության, թե՛ ստորադասության ժամանակ հենց սկզբից առկա են արտահայտության երկու (կամ ավելի) բաղադրիչները, որոնք, նայած հանգամանքների կամ արտահայտած նշանակության, միանում են շարահյուսական կապի այս կամ այն տեսակով (համադասական կամ ստորադասական)։ Իսկ հավելական կապակցության դեպքում երկրորդ բաղադրիչը հենց սկզբից առկա չէ։ Այսպես՝ «Սիմոնյանը ժպտում է, և դա ճարզանքի ժպիտ է՝ ուսուցչին ուղղված» (ՍԱ, էջ 15), «Ուռկանը լիքն է դուրս գալիս, և ես շատ եմ ուրախանում» (Աղ., էջ 20)։

Բերված օրինակներից երևում է, որ հավելական կապակցությունների դեպքում երկրորդ բաղադրիչն առաջանում է խոսքի ընթացքում (նախորդ բաղադրիչի արտաբերության ժամանակ կամ նրա ավարտից անմիջապես հե-

տոր) և իր արտահայտած իմաստով էլ նախորդի համար դառնում է լրացուցիչ հաղորդում, գլխում ծագած հանկարծակի միտք, ասվածի ճշգրտում, բացատրություն։

Հավելական կապակցությունների մյուս կարևոր առանձնահատկությունը հիմնական արտահայտությունից նրանց ունեցած ընդհատվածությունն է։ Դրանք դրվում են տևական դադարից հետո և առանձնացվում են թե՛ տրամաբանական շեշտով, թե՛ հնչերանգով։ Հենց սրանով էլ պայմանավորված է հավելական կապակցությունների կառուցվածքային-արտասանական զուգահեռականության ինքնատիպությունը։ Եթե ընդհանրապես համադասության և ստորադասության ժամանակ բաղադրիչների միջև կա կառուցվածքային զուգահեռականություն, և անցումը մի բաղադրիչից մյուսին կատարվում է սահուն արտասանությամբ, ապա հավելական կապակցությունների ժամանակ այդ զուգահեռականությունը խախտվում է, և դրանց արտասանությունը նույն սահունությունը չունի, ընդհատված է, դադարով անջատված։

Հավելական կապակցությունների համար բնութագրական է նաև ինքնատիպ ռիթմամեղեդիականությունն ու հնչերանգային բազմազանությունը։ Դա արտահայտվում է ինչպես ձայնի երանգի, տոնի, բարձրության, խոսքի տեմպի փոփոխությամբ, այնպես էլ ամենատարբեր հնչերանգների դրսևորմամբ (հարցական, բացականչական, հրամայական և այլն)։ Օրինակ՝ «Ես ոչ ոքի չեմ պատմել, չեմ գանգատվել... Եվ կարեկցո՞ղն ով է, կարեկցեն՝ էլ ի՞նչ օգուտ» (Շիրվ., էջ 502)։ «Աստղին նայելով չէր նկատել նրա տեղաշարժը։ Եվ ի՜նչ զողտրիկ աստղ էր» (ԱԱ, էջ 81)։

Հավելական կապակցությունների մասին խոսելիս պետք է նշել նաև նրանց եղանակավորությունը։ Այս քերականական կարգը տարբեր չափերով հատուկ է գրեթե յուրաքանչյուր արտահայտության։ Խոսքի մեջ այն դրսևորվում է բառական, ձևաբանական, շարահյուսական, հնչերանգային և այլ միջոցներով։ Այսպես՝ «Հաճախ էին պարսավում նրան։ Եվ իրավացիորեն» (Ավ. 26. V. 1978)։

Բերված օրինակում պարզ երևում է խոսողի վերաբերմունքն իր հաղորդած փաստի նկատմամբ։ Նկատվում է նաև հավելական կապակցությունների բնորոշ գծերից մեկը՝ բառերի դասավորության հատուկ կարգը (մասնավորապես և իրավացիորեն պարագայի զատվածությունը պարսավում էին ստորոգյալից)։

Հավելական կապակցությունների եղանակավորության դրսևորման համար լայն հնարավորություն են ստեղծում նրանց հարուստ հնչերանգը, խոսքի տեմպի, ձայնի տոնի փոփոխությունը, լրացուցիչ հաղորդման, բացատրության, գնահատման, ճշգրտման նշանակությունները և այլն։

Հավելական կապակցությունները սահմանազատվում են նաև համանման մի շարք շարահյուսական միավորներից։ Հավելական կապակցությունները, ինչպես և միջանկյալ կապակցությունները, ունեն լրացուցիչ հաղորդման նշանակություն և հիմնական արտահայտությունից բաժանված են դադարով։ Հենց այս ընդհանրությունն էլ երբեմն պատճառ է դառնում դրանց համընկնմանը, նույնացմանը։ Սակայն, եթե միջանկյալ կապակցությունները քերականորեն ուղղակի կապված չեն այն նախադասության անդամների հետ, որի կազմի մեջ մտնում են, ապա հավելական կապակցությունները ավելի սերտ են միացած հիմնական արտահայտությանը և քերականորեն մեկ ընդ-

հանրություն են կազմում նրա հետ։ Բացի այդ, հավելական կապակցությունները դրվում են միայն հիմնական արտահայտությունից հետո, մինչդեռ միջանկյալ կապակցությունները կարող են դրվել նախադասության և՛ սկզբում, և՛ վերջում, և՛ նրա ներսում։

Իրենց իմաստային և քերականական ինքնուրույնությամբ երբեմն հավելական կապակցություններին մերձենում են նաև նախադասության բազմակի անդամները, բայց եթե դրանք բնութագրվում են հիմնական արտահայտության ներսում հնչերանգային առանձնացումով, ապա հավելական կապակցությունները բնութագրվում են հիմնական արտահայտությունից ունեցած ընդհատվածությամբ։ Վերջիններս արտասանվում են տևական դադարից հետո. որը նրանց հաղորդում է իմաստային և քերականական ավելի մեծ ինքնուրույնություն։ Գրավոր խոսքում բազմակի անդամներն իրարից անջատվում են ստորակետով, իսկ դրանցով դրսևորված հավելական կապակցությունները հիմնականում հաջորդում են միայն վերջակետից հետո։ Ինչպես՝ «Հողից հանեց քարերը։ Վանքեր շինեց։ Բերդեր։ Տներ ու կամուրջներ։ Ավաղ, նաև գերեզմաններ» (ՎՊ, էջ 109)։

Գրավոր և բանավոր խոսքում հաճախ հավելական կապակցությունները կարող են համընկնել թերի նախադասությունների հետ։ Հարցն այն է, որ թերի նախադասությունը հաճախ հանդես է գալիս որպես հավելում, լրացուցիչ ասված միտք, բացատրություն՝ դառնալով հավելական կապակցություն, կամ հակառակը՝ չի արտահայտվում, պակասում է հավելական կապակցության որևէ անդամը, և այն դրսևորվում է որպես թերի նախադասություն։ Օրինակ՝ «Բայց նա չլսեց։ Ոչ էլ ճանաչեց։ Ոչ էլ ճիշեց» (ՊՋ, էջ 214)։ Այստեղ ընդգծված մասերը, անշուշտ, թերի նախադասություններ են և, միաժամանակ՝ հավելական կապակցություններ։ Սակայն կիրառական այս համընկնումը դրանց նույնացման պատճառ չպետք է դառնա։ Դրանք շարահյուսական միանգամայն տարբեր երևույթներ են իրենց բնորոշ գծերով ու առանձնահատկություններով։ Ճիշտ է, թերի նախադասությունն էլ վերականգնվում է ի հաշիվ նախորդ արտահայտության, բայց միշտ չէ, որ նա կարող է ունենալ հավելման, լրացման այն նշանակությունը, ինչ ունի հավելական կապակցությունը։ Այնպես որ, եթե շարահյուսական որևէ հատկանիշով (ոչ լրիվ անդամների առկայություն) հավելական կապակցությունը կարող է նույնանալ թերի նախադասության հետ, ապա կարող է պահպանել նաև իրեն հատուկ իմաստային-կիրառական հատկանիշը՝ հավելում արտահայտելը։

Ինչպես տեսնում ենք, հավելական կապակցությունները, որպես շարահյուսական կապի տեսակ, առանձնանում են մի շարք բնութագրական հատկանիշներով։ Եվ նկատի ունենալով նրանց էությունն ու հիմնական առանձնահատկությունները, ինչպես շարահյուսական հարաբերության երկու տիպերից (համադասություն, ստորադասություն), այնպես էլ համանման մյուս միավորներից ունեցած տարբերություններն ու բնորոշ գծերը, մենք հավելական ենք համարում այն կապակցությունները, որոնք միանալով արտահայտության հիմնական մասին՝ բովանդակում են լրացուցիչ հաղորդում, հիշեցրում, բացատրություն, եզրակացություն, գնահատություն՝ հանդես գալով որպես իմաստային կամ վերաբերմունքային հավելում, առանձնացվում են տևական դադարով, հատուկ հնչերանգով և սովորաբար առաջանում են հիմ-

նական մասի արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո:

Հավելական կապակցությունները լինում են տարատեսակ և տարաբնույթ: Դա ևս պայմանավորված է նրանց կառուցվածքային-քերականական հատկանիշներով, իմաստային ու շարահյուսական գործառնությամբ: Ամենից առաջ աչքի է ընկնում նրանց կառուցվածքային բաղմազանությունը: Դրանք կարող են հանդես գալ տարբեր կառուցվածքներում՝ արտահայտելով հավելական հարաբերություն թե՛ պարզ նախադասության անդամների միջև, թե՛ բարդ նախադասության բաղադրիչների միջև, թե՛ առանձին, ինքնուրույն նախադասությունների, և թե՛ նույնիսկ խոսքի առանձին հատվածների ու գլուխների միջև: Այսպես՝ «Տղան աչքի ընկավ վարժ ընթերցումով, ինչպես նաև դուրեկան ձայնով» (Հմ. Ս., էջ 4): «Սիրտը խառնում էր: Եվ կծկումներն էլ ավելի սաստկացան» (ԿՍ, էջ 137): Սրանից էլ բխում է այն հանգամանքը, որ հավելական կապակցությունը կարող է դրսևորվել բառով («Ինքն իրեն է խաբում: Եվ անզորությունից», ՄԳ, էջ 108), բառակապակցությամբ («Զվարճանում և ապրում էր մաքուր օդում. և առանց լարվածության», ՋԼ, էջ 445) և տարբեր կառուցվածքի նախադասություններով:

Ըստ արտահայտած իմաստի՝ հավելական կապակցությունները կարող են բովանդակել լրացուցիչ միտք, մանրամասն, կարևոր, էական տեղեկություն, արտահայտել վերաբերմունք, գնահատություն, կատարել ընդհանրացում, ամփոփում: Բացի այդ, դրանք կարող են հանդես գալ նաև իմաստային-տրամաբանական ամենատարբեր հարաբերություններով ու նրբերանգներով (պատճառա-հետևանքային, բացատրական, պայմանական և այլն): Ինչպես՝ «Ողջ քաղաքը նրանց նշանված էր համարում, և դրանից իրենք էլ լավ էին զգում» (ՎԹ, էջ 62): «Կանաչեցրու սարը. և սերս քոնը կլինի» (ՍԿ, էջ 256): «Ուղիղ աչքերիս նայեց, և ինչ անես, սիրում է ուղիղ աչքերին նայել» (ՍՎ, էջ 76):

Իսկ ըստ արտահայտած շարահյուսական հարաբերության, ինչպես արդեն ասվել է, առանձնանում են երկու տիպեր՝ համադասություն և ստորադասություն ցույց տվող հավելական կապակցություններ:

Ըստ շարահյուսական դերի նույնպես հավելական կապակցությունները բաժանվում են տարբեր տեսակների: Դրանք կարող են հանդես գալ ենթակայի («Հպարտությունը թույլ չէր տալիս նրան այդ անելու: Եվ անվիճելի իրավացիությունը», ՌՌ, էջ 80), ստորոգյալի («Կախվել էր Իշխանի գոտուց ու ճոճվում էր: Ու շողում, շողշողում էր», ՀՄ, էջ 34), խնդրի («Իմ ուրախությունն ու հույզերն եմ շարում: Նաև արցունքները», ՎՊ, էջ 265), պարագայի («Ես արդեն մենակ եմ: Կեսօրից», ԿՍ, էջ 14) և նախադասության այլ անդամի պաշտոնով:

Ըստ հիմնական մտքին միանալու միջոցի՝ հավելական կապակցությունները լինում են շաղկապավոր և անշաղկապ: Երկրորդ դեպքում միացումն իրականացվում է շարահարությամբ, իսկ առաջին դեպքում որպես միացման միջոց հանդես են գալիս ինչպես մի շարք համադասական (և, ու, իսկ, սակայն, բայց) ու ստորադասական (որ, երբ, եթե և այլն), այնպես էլ զուտ հավելական շաղկապներն ու շաղկապական բառերը, որոնք ծառայում են հատկապես հավելական հարաբերություն արտահայտելու համար (ևս, նաև, այլև, էլ, ինչպես և, ոչ միայն-այլև, ինչպես-այնպես էլ և այլն):

Բազմազան են նաև հավելական կապակցությունների ոճական կիրառությունները։ Առաջանալով նախապես ժողովրդախոսակցական լեզվում, դրանք այնուհետև ընդլայնել են իրենց գործածության ոլորտները, ձեռք բերել հարուստ ոճական հնարավորություններ և լայնորեն կիրառվում են ժամանակակից հայերենի գործառական բոլոր ոճերում՝ դրսևորելով ոճական բազմապիսի հնարանքներ։ Այսպիսով.

1. Հավելական կապակցությունները բնութագրվում են նախ իրենց իմաստային կողմով. այսինքն հիմնական արտահայտության հետ իմաստային մեկ մակարդակի վրա չգտնվելով՝ միանում են նրան որպես լրացուցիչ հաղորդում, բացատրություն, ճշգրտում, իմաստային ու վերաբերմունքային հավելում։

2. Հիմնական արտահայտության և հավելական կապակցության միացումը կատարվում է տևական դադարից հետո՝ շաղկապներով կամ շարահարությամբ։

3. Նշված երկու գլխավոր առանձնահատկություններով էլ պայմանավորված են հավելական կապակցությունների մյուս գծերը՝ կառուցվածքային-արտասանական զուգահեռականության ինքնատիպությունն ու բառերի դասավորության յուրահատուկ կարգը, ռիթմամեղեդիական և հնչերանգային համապատասխան դրսևորումը, եղանակավորության բազմազանությունը, իմաստային տեսակետից հիմնական արտահայտության արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո առաջանալը, շարահյուսական տեսակետից՝ միշտ հիմնական արտահայտությունից հետո դրվելը և այլն։

4. Տարատեսակ և տարաբնույթ են հավելական կապակցությունները, և այդ տարբեր տեսակների առանձնացման համար կարևոր նշանակություն ունի այնպիսի էական կողմերի հաշվառումը, ինչպիսիք են նրանց կառուցվածքը, արտահայտած իմաստն ու դրսևորած շարահյուսական հարաբերությունը, կատարած շարահյուսական պաշտոնն ու հիմնական մտքին միանալու միջոցը։

5. Հավելական կապակցությունները լայնորեն օգտագործվում են արդի հայերենի գործառական գրեթե բոլոր ոլորտներում որպես շարահյուսական կապի տեսակ։ Դա պայմանավորված է իմաստային-տրամաբանական տարբեր կապեր ու հարաբերություններ, ոճական զանազան հնարանքներ դրսևորելու նրանց հատկությամբ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղղ.—Աղավնի, Շիրակ. Երևան, 1973։
Ավ.—«Ավանդարդ»։
ԲՌ—Բ. Ռայնով, Վատ եղանակից լավ բան չկա, Երևան, 1975։
ԿՍ—Կ. Սիմոնյան, Ներսես Մաժան դեղագործը, Երևան, 1974։
ՀՄ.—Հ. Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967։
Հմ. Ս.—Հ. Սիրաս, Հայրենի աշխարհ, Երևան, 1974։
ՄԳ.—Մ. Գալշոյան, Բովտուն, Երևան, 1974։
Շիրվ.—Շիրվանզադե, Պատմվածքներ և վիպակներ, Երևան, 1971։
Շխ.—Շ. Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Երևան, 1970։
ՊՋ.—Պ. Ջեյթունցյան, Կատակերգություն առանց մասնակիցների, Երևան, 1975։
ՋԼ.—Ջ. Լոնդոն, Երկեր, հ. 10, Երևան, 1970։
ՍԽ.—Ս. Խանզադյան, Կորած արահետներ, Երևան, 1964։

ՍՎ.—Ս. Վարդանյան, Ինչու են թաց նրա աչքերը, Երևան, 1973։
ՍԿ.—Ն. Կուրտիկյան, Լուսաշխարհ հանիս գիս գութան, Երևան, 1974։
ՍԱ.—Ս. Ալաստյան, Եղեգները խոնարհվեցին. Երևան, 1970։
ՎՊ.—Վ. Պետրոսյան, Դեղատուն Անի, Երևան, 1973։
ՎԲ.—Վ. Թոթովենց, Կյանքը հին հովվական հանապարհի վրա, Երևան, 1966։
ՌՌ.—Ռ. Ռոլան, Համավաժ հոգին, Երևան, 1975։

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРИСОЕДИНИТЕЛЬНЫХ КОНСТРУКЦИЙ

НВЕР САРКИСЯН

Резюме

Присоединительными называются такие конструкции, которые не находятся в одной смысловой плоскости с предыдущими высказываниями, а возникают во время его произнесения или же сразу после его окончания и соединяются как добавочные суждения, объявления, уточнения, содержательные и относительные прибавления. Присоединительные конструкции от соответствующих синтаксических единиц отличаются несколькими характерными чертами: выделение и обособление паузой от предыдущего высказывания, интонационные и ритмико-мелодические особенности, своеобразие структурно-произносительной системы, определенный порядок слов, неисчерпаемые возможности выражения модальности и т. д. Можно выделить несколько типов присоединительных конструкций по структуре, по способу сочинения, по синтаксической функции, по выраженному значению и синтаксическому отношению.

Как один из видов синтаксической связи присоединительные конструкции выражают различные логико-смысловые отношения. Многообразны также их стилистические применения.